

Քոչարեան. «Պիտի վիճարկենք ընտրութիւններու արդիւնքները»

ԵՐԵՒԱՆ.- «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոպերթ Քոչարեան յայտարարեց, որ դաշինքը պիտի վիճարկէ խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքները՝ մատնանշելով, որ ընտրական գործընթացը տեղի ունեցած է «իշխանական համատարած ճնշումներու, ընդդիմադիրներու ձերբակալութիւններու, վարչական լծակներու աննախագէտ շահագործման եւ բազմաթիւ ընտրախախտումներու պայմաններու տակ»:



Քոչարեան շնորհակալութիւն յայտնեց «Հայաստան» դաշինքին վստահութիւն տուած բոլոր քաղաքացիներուն՝ նշելով, որ իւրաքանչիւր քուէ կարեւոր նշանակութիւն ունի իրենց քաղաքական ուժին համար:

Ան նաեւ տեղեկացուց, որ ներկայիս դաշինքը հետագայ քայլերու շուրջ քննարկումներ կը կատարէ ընդդիմադիր դաշտի իր գործընկերներուն հետ, իսկ յառաջիկայ գործողութիւններուն վերաբերեալ աւելի մանրամասն մօտեցումները պիտի ներկայացուին այդ խորհրդակցութիւններու աւարտէն ետք:

«Մէկ բան յստակ է՝ չենք ընկրկիր եւ չենք լքեր պայքարի մեր խրամատը», ընդգծեց Քոչարեան:

Պաշարը պիտի շարունակուի մինչեւ յաղթանակ. Սաղաթէլեան

ԵՐԵՒԱՆ.- ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան շնորհակալութիւն յայտնեց իրենց քաղաքական ուժին աջակցած եւ վստահութիւն ցուցաբերած քաղաքացիներուն՝ նշելով, որ տրուած իւրաքանչիւր քուէ եւ արտայայտուած վստահութիւն մեծ նշանակութիւն ունի իրենց համար:



Սաղաթէլեան ընդգծեց, որ ընտրութիւններուն արդիւնքներէն անկախ, իրենք պիտի շարունակեն իրենց քաղաքական գործունէութիւնն ու ազգային պայքարը՝ յանձնառու մնալով Հայաստանի անվտանգութեան, զարգացման եւ պետականութեան ամրապնդման ուղղուած նպատակներուն: Ան շեշտեց, որ իրենց համար հայրենիքին ծառայելու առաքելութիւնը չի սահմանափակուիր ընտրական գործընթացով, այլ կը շարունակուի քաղաքական եւ հասարակական հետեւողական աշխատանքով:

Անդրադառնալով հետագայ քայլերուն՝ Սաղաթէլեան նշեց, որ յառաջիկային աւելի մանրամասն պիտի ներկայացնեն իրենց ծրագիրները: «Շնորհակալ ենք մեզ տրուած իւրաքանչիւր քուէին եւ մեր դաշինքին նկատմամբ ցուցաբերուած վստահութեան համար: Մեր հայրենիքին համար աննահանջ պայքարը պիտի շարունակենք մինչեւ յաղթանակ», ըսաւ ան:

Հայաստանի ինքնորոգ խորհրդարանական ընտրութիւնները՝ արտաքին միջամտութեան, ընդդիմութեան դէմ ճնշումներու եւ օրինախախտումներու ստուերին տակ

ԵՐԵՒԱՆ.- Հայաստանի մէջ վերանկախացումէն ի վեր տեղի ունեցած ինքնորոգ խորհրդարանական ընտրութիւնները աւարտեցան քաղաքական խոր բեւեռացման, ընտրախախտումներու բազմաթիւ ահազանգերու, ընդդիմադիր ուժերու նկատմամբ ճնշումներու եւ արտաքին դերակատարներու բացայայտ միջամտութեան մթնոլորտի մէջ:


Օրէնքին համաձայն, նորընտիր Ազգային ժողովը պէտք է ունենայ առնուազն 101 պատգամաւոր եւ ներառէ նուազագոյնը երեք քաղաքական ուժ: Այս ընտրութիւններուն մասնակցեցան 16 կուսակցութիւն եւ 2 դաշինք: Խորհրդարան մուտք գործելու համար կուսակցութիւններուն անհրաժեշտ էր ապահովել առնուազն 4 առ հարիւր, իսկ դաշինքներուն՝ 8 առ հարիւր ձայն: Կեդրոնական ընտրական յանձնաժողովի տուեալներով, քուէարկելու իրաւունք ունէր 2 միլիոն 505 հազար 102 քաղաքացի: Քուէարկութիւնը նշանակութեամբ բարձր մասնակցութեամբ երեկոյեան ժամը 20:00-ի դրութեամբ մասնակցութիւնը հասած էր 58.97 առ հարիւրի, կամ 1 միլիոն 476 հազար 597 քուէարկողի:

Կեդրոնական ընտրական յանձնաժողովի նախնական արդիւնքներուն համաձայն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը ստացած է 727,827 ձայն կամ 49.825 առ հարիւր, «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 340,088 ձայն կամ 23.281 առ հարիւր, «Հայաստան» դաշինքը՝ 145,113 ձայն կամ 9.934 առ հարիւր: «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ստացած է 58,378 ձայն կամ 3.996 առ հարիւր՝ ընդամենը 0.004 առ հարիւրով գիջելով խորհրդարան անցնելու անհրաժեշտ շեմին: ԿԸՅ-ն յայտարարած է, որ վերահաշուարկներու եւ ճշգրտումներու

Ընտրութիւններ... Ծար. կարդալ էջ 4

Ցուակցագիր Ընկեր Հրաչ Մանուկեանի

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն սրտի խոր կսկիծով կը յայտնէ իր շրջանի վաստակաշատ ընկերներէն, Կեդրոնական կոմիտէի նախկին անգամ, հաստատար եւ նուիրեալ դաշնակցական ԸՆԿ. ՀՐԱՉ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան բօթը:



Ընկ. Հրաչ Մանուկեան իր կեանքը նուիրեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան իտէալներուն, հայ ժողովուրդի ազգային ձգտումներուն եւ Հայ Դատի հետապնդման սրբազան առաքելութեան: Տասնամեակներ շարունակ ան իր փորձառութիւնը, կարողութիւններն ու անխոնջ աշխատանքը ի սպաս դրաւ կազմակերպութեան՝ նշանակալի նպաստ բերելով հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան, ինչպէս նաեւ գանատահայ համայնքի կազմակերպման, զարգացման եւ հզօրացման գործին:

Ընկ. Հրաչ Մանուկեան պիտի յիշուի որպէս սկզբունքային, ազնիւ եւ նուիրեալ դաշնակցական, որ իր նուիրումով ու ծառայութեամբ արժանացաւ իր ընկերներուն եւ համայնքի անդամներուն յարգանքին ու գնահատանքին:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանիքին, հարազատներուն եւ գաղափարակից ընկերներուն:

ՀՅԴ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ESPACE 32
CABINET DE MÉDECINE DENTAIRE

Dre Tamar Stamboulian
Dentiste généraliste
514 337-0007
info@espace32.ca

2663 RUE DE SALABERRY
MONTREAL, QC H3M 1L1

Espace32.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

★ IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Գանատահայությունը նշեց Հայաստանի անկախության 108-ամեակը



Հայաստանի Ա. Հանրապետության հիմնադրության 108-ամեակը այս տարի հանդիսանում է կերպով նշուեցաւ Գանատայի տարբեր գաղութներուն մէջ: Վանդուվըրէն մինչեւ Թորոնթօ, Մոնթրէալ-Լաւալ եւ Գեմպրիճ, հարիւրաւոր գանատահայեր համախմբուեցան նշելու Մայիս 28-ի խորհուրդը, վերանորոգելու իրենց ազգային ուխտը եւ յարգելու այն սերունդը, որ 1918-ին կերտեց հայկական անկախ պետականութիւնը:

Վանդուվըր

Ուրբաթ, 29 մայիս 2026-ին, Վանդուվըրի Հայ կեդրոնի «Լազարեան» սրահին մէջ, ՀՅԴ «Սիմոն Վրացեան» կոմիտէի, ՀՅԴ Գանատայի երիտասարդական եւ Պատանեկան միութիւններու տեղական մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ Համազգայինի «Վարազ» մասնաճիւղին կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Հայաստանի պետականութեան 108-ամեակին նուիրուած ձեռնարկը:

Հանդիսութիւնը բացուեցաւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներով: Բացման խօսքը փոխանցեց Աննա Պախեճեան, իսկ օրուան պատգամը ներկայացուց Համազգայինի «Վարազ» մասնաճիւղի անդամ Հեղինէ Արամեան, որ անդրադարձաւ հայոց պատմութեան տարբեր հանգրուաններուն, ազգային միասնութեան եւ պետականութեան պահպանման պատասխանատուութեան:

Ծրագրին ընթացքին պատանիները ներկայացուցին արտասանութիւններ եւ ասմունքներ, իսկ ձեռնարկի աւարտին Վանդուվըրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգ. Տ. Վարդան Մ. Վրդ. Թաշճեան «Պահպանիչ» աղօթքով օրհնեց ներկաներն ու ճաշասեղանները: Երեկոն շարունակուեցաւ ընտանեկան մթնոլորտի մէջ՝ ազգային եւ յեղափոխական երգերով:

Թորոնթօ

Թորոնթօյի մէջ Հայաստանի անկախութեան 108-ամեակը նշուեցաւ մեծ շուքով եւ ժողովրդային լայն մասնակցութեամբ: Շաբաթ, 30 մայիս 2026-ին, ՀՅԴ «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի կազմակերպած տօնակատարութիւնը սկսաւ համայնքային նոր կառոյցի շրջափակէն, ուր ՀՄԸՄ-ի փողերախումբին առաջնորդութեամբ տեղի ունեցաւ տողանցք դէպի Հայ կեդրոն:



Տողանցքին մասնակցեցան ՀՄԸՄ-ի սկսուտներ, ԳԵՄ-ականներ, պատանիներ, միութենականներ, ծնողներ եւ համայնքի բազմաթիւ անդամներ: Դրօշակի արարողութեանէն եւ օրհներգներէն ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծութեամբ յարգեցին հայ ժողովուրդի նահատակներուն յիշատակը:

Հոգեւոր պատգամը փոխանցեց Գերպ. Տ. Գարեգին Մ. Վրդ. Շիրտմեան, որ շեշտեց Մայիս 28-ի վերածնունդի խորհուրդը եւ կոչ ուղղեց պահպանելու հայ լեզուն, մշակոյթը, եկեղեցին եւ ազգային արժէքները:

Օրուան գլխաւոր քաղաքական պատգամը փոխանցեց ՀՅԴ «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի անդամ Յովիկ Գուլումճեան, որ ընդգծեց ինքնութեան եւ պետականութեան անբաժանելիութիւնը: Ան յիշեցուց, թէ ազգային իրաւունքները պէտք է դիտել որպէս ժառանգութիւն եւ պատասխանատուութիւն, ոչ թէ բեռ, եւ վերահաստատեց համայնքի յանձնառութիւնը՝ ծառայելու ազգին, պաշտպանելու պետականութիւնը եւ չմոռնալու Արարտն ու Արցախը:

Տօնախմբութիւնը եզրափակուեցաւ Գոհար Յովհաննէսեանի ազգային եւ հայրենասիրական երգերով, գոլանայի եւ տհուրի ընկերակցութեամբ:

Մոնթրէալ

Մոնթրէալի մէջ Հայաստանի անկախութեան տօնակատարութեան առանցքը դարձաւ ՀՄԸՄ-Կամք Մոնթրէալի մասնաճիւղին կազմակերպած աւանդական տողանցքը, որ սկիզբ առաւ Parc Marcelin-Wilson-էն եւ հասաւ մինչեւ Մոնթրէալի Հայ կեդրոն:

Կիրակի, 31 մայիս 2026-ին տեղի ունեցած տողանցքին մասնակցեցան ՀՄԸՄ-Կամք Մոնթրէալի եւ ՀՄԸՄ Լաւալի մասնաճիւղերու սկսուտական ու մարզական կազմերը, փողերախումբը, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մեծ թիւով մոնթրէալահայեր եւ լաւալահայեր: Ներկայ էին նաեւ Մոնթրէալի յոյն համայնքի ներկայացուցիչներ:



Դրօշակի արարողութեանէն ետք, ՀՄԸՄ-Կամք Մոնթրէալի վարչութեան ներկայացուցիչ Արթի Գազարեան իր խօսքին մէջ շեշտեց, որ Մայիս 28-ի ոգին միայն Հայաստանի մէջ չէ մնացած, այլ պատասխանատուութիւն դարձած է ամբողջ հայութեան համար: Ան յատկապէս դիմեց երիտասարդութեան՝ կոչ ուղղելով հաւատարմութիւն սեփական ուժերուն եւ շարունակելու ազգային ծառայութիւնը:

ՀՅԴ Մոնթրէալի «Միհրան Փափագեան» կոմիտէի ներկայացուցիչ Յարութ Դաւիթեան իր կարգին շեշտեց հայ ժողովուրդի կամքի, միութեան եւ ազգային պատկանելիութեան զգացումի կարեւորութիւնը, յիշեցնելով որ եռագոյն դրօշակը ժառանգուած է զոհողութիւններով եւ պէտք է արժանավայել կերպով փոխանցուի յաջորդ սերունդներուն:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերպ. Տ. Բաբգէն Արք. Չարեան իր պատգամին մէջ յիշեցուց, որ Մայիս 28-ը կը խորհրդանշէ շարունակական պայքար եւ հաւատարմութիւն ազգային արժէքներուն ու սրբութիւններուն: Պաշտօնական արարողութիւնը աւարտեցաւ «Կիլիկիա» օրհներգով, որմէ ետք տօնախմբութիւնը շարունակուեցաւ ընտանեկան մթնոլորտի մէջ:

Գեմպրիճ

Կիրակի, 31 մայիս 2026-ի յետմիջօրէին, Գեմպրիճի Հայ կեդրոնի շրջափակին մէջ ՀՄԸՄ Գեմպրիճի մասնաճիւղին նախաձեռնութեամբ եւ ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան հովանաւորութեամբ տեղի ունեցաւ Հայաստանի Ա. Հանրապետության 108-ամեակի նշումը:

Ձեռնարկը սկսաւ տողանցքով, որուն մասնակցեցան ՀՄԸՄ-ի սկսուտական կազմերը, փողերախումբը, հոգեւորականները, միութիւններու ներկայացուցիչներն ու մեծ թիւով համայնքային անդամներ: Տողանցքին ընթացքին բարձրացուեցան Գանատայի, Հայաստանի, Արցախի, Օնթարիոյի եւ ՀՄԸՄ-ի դրօշակները:

Գանատայի Առաջնորդական փոխանորդ Գերպ. Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէքեան, նախքան դրօշակի օրհնութիւնը, յայտնեց իր համոզումը, որ հայկական եռագոյնը օր մը պիտի ծածանի Արարատի գագաթին:

ՀՄԸՄ Գեմպրիճի մասնաճիւղի վարչութեան ատենապետ Վրէժ Փամպուլեան իր պատգամին մէջ ընդգծեց, որ Մայիս 28-ը միայն պատմական տարեթիւ մը չէ, այլ հայկական պետականութեան եւ ազգային գոյութեան հիմնաքարը: Ան նաեւ շեշտեց, որ հայ ժողովուրդը կը ձգտի արդար եւ կայուն խղաղութեան, որուն անբաժանելի մասերն են ռազմագերիներու ազատ արձակումը, Արցախի հայութեան վերադարձի ապահովումը եւ ազգային իրաւունքներու պաշտպանութիւնը:

Գեղարուեստական բաժինով հանդէս եկաւ Զարեհ Քենտիրճեան, իսկ ձեռնարկը եզրափակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔԾԵԱՆ ԿԱՄ ՎԱՐԺԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ (Սփիւռքեան մտածողութիւն մը)

«ԱԳՈՒՑՄԱՆ ՏԵՂ»-ԻՆ ՀԱՄԱՐ

Ըստ Քիւրքեանի, սփիւռքահայ մշակութային կեանքին համար՝ հայերէնին դերը անշրջանցելի է: Այս համոզմամբ, ինք հայերէնի ուսուցման նախանձախնդիր մըն էր, եւ թէ՛ ֆրանսասօս ու անգլիաօս, եւ թէ՛ հայաօս նոր սերունդին համար պատրաստողը ձեռնարկներու, դասագիրքերու, եւ ուսուցիչներու համար ուղեցոյցներու:

Արդ, ինչպէ՞ս հասկցած է լեզուն:

Լեզուն «հոգեմտաւոր եւ ընկերաբանական երեւոյթ» մըն է: Անիկա իբր ինքնութեան գիտակցութեան, ու մշակութային «այլազան իրագործումներու», նաեւ՝ բարքերու ամբողջութեան ազուցման տեղ՝ «կենսական դիրք» ունի: Ուստի՝ նոյնքան կենսական է անոր դերը «գոյատեւման գործընթացին մէջ»: Քանի որ անիկա «պարզ գործիք է», այլ կը մարմնացնէ «մտածում» մը, որ արտադրուած է «հաւաքական պատմութեան տեւողութեան»: Անկասկած, «մտածում»ով Քիւրքեան հասկցած է շատ աւելին՝ քան զուտ մտքի կիրարկումները, այսինքն՝ հասկցած է աշխարհընկալում(ներ)էն մինչեւ գաղափարներու մշակումները: Այն «մտածում» «յենարան» է, առանց որուն ամէն ինչ պակասաւոր կ'ըլլայ...:

Արդ, հայերէնը յարաբերաբար հայերու կողմէ գործածուող լեզուներու՝ անհրաժեշտ է, որ նախապատուութիւն վայելէ: Մեր տարբեր լեզուներով շրջապատուած կացութեան մէջ, հայեր կը շահին՝ երբ կը տիրապետեն մայրենի լեզուին: Կը շահին դարաւոր հայերէնին «մտածում»ը: Նախապատուութիւնը, անշուշտ, պէտք է ընկալուի իբր անտեսում շրջապատի լեզուին, կամ՝ այլ տիրող լեզուներու: Հարկ է իւրացումը թէ՛ շրջապատի լեզուին, եւ թէ՛ տիրող այլ լեզուներու: Մեկուսացած հայերէնագիրութիւն մը՝ անբաւարար է ինքնութեան գիտակցութեան համար: Նոյնպէս անբաւարար է միայն շրջապատի լեզուին, կամ տիրող այլ լեզուներու իւրացումը՝ հայօրէն ըլլալու համար: Երկու պարագաներուն ալ, հոգեմտաւոր խզում մը կը յառաջանայ: Սփիւռքահայը կոչուած է յաղթահարելու եւ զանցելու այն խզումը, որ օտարացում է: Ինչպէ՞ս յաղթահարել եւ զանցել զայն: Քիւրքեանի առաջարկն է՝ երկլեզուութեան ռազմավարութեամբ (կարգ մը իրականութիւններու մէջ՝ նաեւ քանի մը լեզուներու ռազմավարութեամբ, աւելցնենք): Այն ռազմավարութիւնը «թիրախ» կ'ունենայ նոր սերունդը, կը յեղափոխէ «դասական դասական ժամանակավրէյ կամ մակերեսային մեթոտներ»ը, տրամախոհականօրէն համարկելով հայերէնը միւս լեզուին (կամ լեզուներուն) հետ:

Այն համարկումը՝ ինք է հասկցած ա-լա-

յունաբան գործունէութիւն մը, ուր մայրենին կը կորսնցնէ իր օրէնքը եւ կատարելապէս կ'ենթարկուի միւս լեզուին (լեզուներուն): Իր հասկացողութեամբ՝ համարկումը է արժեւորիչ գոյակցութիւն: Հայերէնը երբ այնպիսի գոյակցութեան մէջ կը գտնուի, միւս լեզուի օրէնքին «մտածում»ը (միւս լեզուներուն «մտածում»ները) ունկնդրելով, արժեւորելի արժեւորելով՝ նոր որակ մը կը ստեղծէ, նոր որակի մը կը տանի սեփականը: Արժեւորիչ գոյակցութիւնը՝ «բարոյական կեցուածք է, արժէքաբանական ամբողջական դիրքորոշում», եւ ոչ՝ «արհեստավարժական յատկութիւն» կամ ատակութիւն: Ասիկա չի նշանակիր, թէ արհեստավարժականը կարեւոր է, ընդհակառակն՝ շատ կարեւոր է, բայց անոր ճշմարիտ կիրարկումին համար՝ հիմնական է բարոյական կեցուածքը: Քանի որ այն կեցուածքը գոյակցութեան իսկութիւնն է: Անիկա իր օրէնքը չի հասկնար իբր միաձեւութեան անփոփոխելի հրաման, այլ զայն կը խորհի իբր ուղի, որ կը յառաջանայ այլազանութեան սկզբունքին յարգանքով: Անիկա ըստ այնմ կը պահպանէ արեւմտահայերէնի աւանդը, նաեւ կը պահպանէ իր հաստատմութիւնը դասական ուղղագրութեան հանդէպ: Այս տեսակ պահպանումը՝ բացուածք մըն է, որ կրնայ գտնել «համաշխարհային հեռանկար մը»: Հեռանկար մը՝ որ «ներհայկական հաղորդակցամիջոց»ի մը վերածումն է արեւմտահայերէնին, «իբր անդր-պետական էսփերանթօ»: Այս վերածումը կարելի կ'ըլլայ արեւմտահայերէնով մշակելի գրականութեամբ մը, որ համաշխարհային գրական-գեղարուեստական հոսանքներուն կ'առձակատի: Ասոր զուգահեռաբար՝ այլ լեզուներէ արտադրութիւններու թարգմանութիւններով: Թարգմանութիւնները «էական գործընթաց» մըն են. անոնք այլ լեզուներու եւ մշակոյթներու հետ հաղորդակցութիւն կը ստեղծեն, եւ կենսունակութիւն կու տան սեփական լեզուին:

Մայրենիի նոր որակին ստեղծումը՝ «կը պատրաստէ սփիւռքեան վերապրումի տարբեր, նոր ձեւ մը, տրիպականօրէն հայկական ձեւ մը»: Անիկա «զգայուն հաւասարակշռութեան» որակ մըն է, որ կ'ազատագրէ եւ դրամական զարգացումի մեկնակէտ կ'ըլլայ: Այս ընթացքը, անկասկած, պիտի վերափոխէ արեւմտահայերէնը:

Իսկ արեւելահայերէնին եւ արեւմտահայերէնին մերձեցման հարցին՝ ի՞նչ տեսակէտ ունեցած է Քիւրքեան: Նախ հայերէնի այսպէս երկձիւղումը համարած է հետեւանք պատմա-քաղաքական բազմադարեան անբնական պայմաններու: Ապա անդրադառնալով անոնց համաձուլման խնդրին՝ ինք հակած է այն տեսակէտին, թէ ատիկա արուես-

տակեալ փորձերով անիրագործելի է: Իր կարծիքով՝ լեզուական փոփոխութիւնները կարելի կ'ըլլան միայն բնական հոլովոյթով: Ուստի՝ համաձուլման գաղափարին տեղ՝ խորհած է մերձեցման մասին, եւ ատոր համար նպաստաւոր տեսած է ներագալիս հոգեմտաւոր հաղորդակցութիւնը, շփումներու սերտացումը եւ հասարակաց գետնի մը որոնումը: Ըստ մերձեցման իր առաջարկներուն, հիմնական խնդիրը՝ ուղղագրութիւնն է: Արեւելահայերէնը պէտք է վերադառնայ նախախորհրդային ժամանակաշրջանին իր կիրարկած դասական գրելաձեւին: Դիւրին չէ ասիկա ընելը, բայց՝ անհրաժեշտ: Ապա հարկ է հեռու մնալ իւրաքանչիւր լեզուաճիւղի «կաղապարուած եւ անփոփոխելի տարբերք»էն, քանի որ անոր «օրկանական էութիւն»ը «տեղ չի տար մերձեցումի ուղղակի փորձերու»: Արդ, ասպարէզը միայն կրնայ վերաբերիլ «մասնակի-անուղղակի»ին, այսինքն՝ բառամթերքին, որ ընդհանրութեան մէջ՝ երկուքին մօտ «միեւնոյնն է», դարձուածքներուն, եռաստիճան բաղաձայններուն, յատուկ անուններու ուղղագրման: Ու այն ասպարէզը պիտի հաւատայ «բնական փոխ-թափանցում»ին:

Թող ներուի ինձի, որ հիմա տեղին չեմ գտներ մէկ առ մէկ բանալ իր առաջարկները: Ընթերցողը կը յղեմ իր «Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուաճիւղեր/Մերձեցումի Կարելիք Եւ Անկարելիք» յօդուածին: Չեմ բանար՝ որովհետեւ լեզուաբանական անջատ ու ծաւալուն քննութեան մը նիւթն է անիկա:

Ինք արեւմտահայերէնը մօտիկ դրած է դասական կամ գրաբար հայերէնին, ուստի՝ լեզուաճիւղերուն մերձեցման համար՝ գրած է, թէ արեւելահայերէնին «էական խնդիր»ն է՝ «վերա-կամրջումի խնդիրը՝ ազգային անցեալի եւ ո՛ղջ աւանդութեան հետ»: Այն վերա-կամրջումը՝ մեծապէս պիտի ծառայէ արեւելահայերէնին եւ արեւմտահայերէնին մերձեցման:

Մինչ այդ՝ արեւմտահայ Սփիւռքը կարեւոր է, որ ստանձնէ լեզուական իր ժառանգութիւնը: Ոչ թէ Երեւանէն սպասէ նախաձեռնութիւնը իր լեզուին ուսուցման ծրագրիներուն, այլ ինք նախաձեռնէ՝ յարգելով սփիւռքեան իր պայմաններուն նոր սերունդները, որոնք երկլեզուութեան (կարելի է աւելցնել. շարք մը տեղեր՝ եռալեզուութեան կամ բազմալեզուութեան) բնակիչներ են...: Զուգահեռաբար, ամբողջական ծրագրումով՝ հայերէնի աւանդման մարդուժ պատրաստելու հետամուտ ըլլայ:

ԳԱՌՆԻԿ Ա. Գ. (Շարունակելի 10)

Ընտրութիւններ... Սկիզբը կարդալ էջ 1

փուլը կրնայ ազդեցութիւն ունենալ յատկապէս սահմանագիծին վրայ գտնուող ուժերուն վերջնական արդիւնքներուն վրայ:

Ընտրութիւններուն ընթացքին եւ անոնց նախորդող շաբաթներուն ընդգիծադիր ուժերը բազմիցս ահագանգեցին վարչական լծակներու չարաչահման, քաղաքական հետապնդումներու, ձեռքարկութիւններու, ընտրակաշառքի, ընտրողներու վրայ ճնշումներու եւ այլ ընտրախախտումներու մասին: «Ուժեղ Հայաստան» դաշինքի առաջնորդ Սամուէլ Կարապետեան ընտրութիւնները բնորոշեց որպէս «խայտառակ» եւ յայտարարեց, որ իր քաղաքական ուժին դէմ գործադրուած են աննախադէպ ճնշումներ, մինչդեռ «Հայաստան» դաշինքը եւ այլ ընդգիծադիր գործիչներ քննադատեցին վարչապետ Նիկոլ Փաշինեանի վաղաժամ յաղթանակի յայտարարութիւնը, որ կատարուեցաւ այն պահուն, երբ քուէներու միայն մօտ 10 առ հարիւրը հաշուարկուած էր: Ընդգիծադիր շրջանակները այդ քայլը գնահատեցին որպէս ճնշում Կեղերական ընտրական յանձնաժողովին վրայ եւ փորձ՝ ազդելու ընտրական գործընթացի ընկալման վրայ:

Միւս կողմէ, ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակը նշած է, որ ընտրութիւնները ընդհանուր

առմամբ լաւ կազմակերպուած էին, սակայն արձանագրած է խիստ բեւեռացուած քարոզարշաւ, բաժանարար հեռուորաբանութիւն, կողմնակալ լրատուամիջոցներու ազդեցութիւն եւ արտաքին ուղղակի ճնշման դրսեւորումներ: Միեւնոյն ժամանակ, ԱՊՀ դիտորդական առաքելութիւնը յայտարարեց, թէ ընտրութիւնները եղած են բաց եւ մրցակցային եւ չեն արձանագրուած այնպիսի խախտումներ, որոնք կրնային ազդել արդիւնքներուն վրայ:

Ընտրութիւններէն անմիջապէս ետք շարք մը արտաքին դերակատարներ շտապեցին շնորհակտութիւն Նիկոլ Փաշինեանը: Եւրոպական յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն տեր Լայէնը, Եւրոպական խորհուրդի նախագահ Անթոնիո Գոշթան, Եւրոպական խորհրդարանի նախագահ Ռոպերթ Մեցոլան, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը, Ուքրանիոյ նախագահ Վոլոտիմիր Զելենսքին եւ ԵՄ ընդլայնման հարցերով յանձնակատար Մարթա Քոսթը հրապարակաւ ողջունեցին արդիւնքները եւ շեշտեցին Հայաստանի եւ Եւրոպայի յարաբերութիւններու խորացման անհրաժեշտութիւնը: Քոսթը յատկապէս յայտարարեց, թէ ընտրութիւնները տեղի ունեցած են «Ռուսիոյ լայնածաւալ ճնշումներու եւ միջամտութեան պայմաններուն մէջ» եւ որ հայ ժողովուրդը վերահաստատած է իր ընտրութիւնը յօգուտ «ուժեղ, ինքնիշխան եւ անկախ Հայաստանի»:

Մոսկուան, իր կարգին, ձեռնպահ մնաց անմիջական գնահատականներէ եւ յայտարարեց, որ կը սպասէ վերջնական արդիւնքներուն: Քրեմլի բանբեր Տմիթրի Փեսքով յայտնեց, որ Ռուսիան ուշադիր կը հետեւի ընտրութիւններուն եւ խախտումներու վերաբերող տեղեկութիւններուն, մինչդեռ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա ընդգծեց, թէ հայ հասարակութիւնը խորապէս բեւեռացուած է եւ զգուշացուց, որ բնակչութեան տարբեր շերտերու կարծիքները անտեսող միակողմանի որոշումները կրնան երկիրը մղել աւելի խոր բաժանումներու եւ ընկերատնտեսական ցնցումներու:

Ընտրութիւններու քաղաքական եւ իրաւական վերջնական հետեւանքները տակաւին անորոշ կը մնան, քանի որ վերահաշուարկներու, բողոքարկումներու եւ ընտրախախտումներու վերաբերեալ քննութիւններու գործընթացը պիտի շարունակուի յառաջիկայ օրերուն: Սակայն ակնյայտ է, որ 2026-ի խորհրդարանական ընտրութիւնները տեղի ունեցան բացառիկ ներքաղաքական լարուածութեան, արտաքին ազդեցութիւններու եւ Հայաստանի ապագայ ուղեգիծին շուրջ խոր տարակարծութիւններու պայմաններուն մէջ:



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՂԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Հասցէ՝ **PERMIS DE QUÉBEC**

Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Թ. ՏԱՐԻ ԹԻՄ 7, Յունիս 2026



«ՄԵՆԱԿՈՒԹԵԱԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿ»Ի ԴԵՂԱՄԻՋՈՑԸ

Մարդը ստեղծագործությանց պասակն է՝ պատկերը Աստուծոյ:

Աստուած չուզեց որ մարդը միայնակ մնայ, այլ ունենայ ընկեր, կողակից եւ հաղորդակից ու բաժնեկից:

Այսօր սակայն, մարդկութիւնը «Առանձնութեան համաճարակ» ի մէջ կ'ապրի: Ճիշդ է որ մէկ կոճակի մը սեղմումով կրնայ աշխարհի միւս անկիւնը հաղորդակցիլ, բայց միեւնոյն ատեն նոյն տան մէջ ընտանիքի անդամներ երբեմն օրերով իրարու հետ չեն հաղորդակցիր: Այսօրուան գիտական աշխարհը մեզի արագ տեղեկութիւններ կը փոխանցէ, սակայն շատ յաճախ մեզմէ կը խլէ անմիջական ներկայութիւնը, սրտակից բարեկամութիւնը եւ մարդկային տաքուկ յարաբերութիւնը:

Մարդիկ բազմութեան մէջ կ'ապրին, սակայն զգալի է որ ներքուստ լքուած են եւ կամ լքուած կը զգան: Շատ «ընկերներ» ունին, բայց եւ այնպէս նեղութեան եւ դժուարութեան մէջ իրենց կողին մէկը չունին: Այսօրուան սոցիալական ցանցերը կրնան ժպիտ պարգեւել եւ կամ աւելի ճիշդ կրնան ցուցադրել ժպիտ, բայց չեն կրնար վիրատու հոգին բուժել:

Առաքելներու ժամանակ երբ առաջին հաւատացեալները կը հաւաքուէին, հոգեւոր կապ մը ունէին իրարու հետ, միայն իրարու հետ չէին աղօթեր՝ այլ իրարու հետ կ'ապրէին, իրարու դժուարութիւնները կը կիսէին, իրարու հետ հաց կը բաժնէին եւ ուրախակից ու ցաւակից էին իրարու: Այսօրուան եկեղեցին ալ մեզի համար նոյնը պէտք է ըլլայ, ան մեր մեծ ընտանիքը, համայնքը պէտք է դառնայ եւ ոչ թէ նիւթական շէնք մը, կառոյց մը սովորական, այլ կենդանի, ապրող ներկայութիւն մը: Եկեղեցին միայն «կիրակնօրեայ հանդիպման» վայր պէտք չէ դառնայ, արարողութեան մասնակցելու, աղօթելու, քարոզ մը լսելու եւ վերադառնալու «մեկուսացեալ աշխարհ»: Իրական քրիստոնէական եկեղեցին պատերէն անդին է, ուր մարդկային յարաբերութիւնը, իրարօգնութիւնը, Աստուծոյ ներկայութիւնը եւ սերը շօշափելի կը դառնայ:

Պէտք է վերանորոգենք մեր եկեղեցական, համայնքային կեանքը: Այսինքն պէտք է մենք մեզ վերանորոգենք՝ մեր սրտերը, մեր մտածումներն ու փոխ-յարաբերութիւնները: Մէկ խօսքով Քրիստոս կեդրոնական տեղը գրաւէ մեր կեանքին մէջ:

Այո, վերանորոգենք եւ վերակենսաւորենք մեր եկեղեցին ու համայնքը, դարձնելով սիրոյ, հոգատարութեան, վստահութեան եւ զօրակցութեան տաքուկ վայրի:

Դուրս գանք «մենակութեան համաճարակ»ի կեանքէն եւ միանանք մեր համայնական եւ եկեղեցական նորոգուած եւ վերակենսաւորուած մեծ ընտանիքին:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ԵԿԷՔ ԵՐԹԱՆՔ ԱՄԱՅԻ ՏԵՂ ՄԸ, ՈՐ ԱՌԱՆՁԻՆ ԿՐՆԱՆՔ ԸԼԼԱԼ ԵՒ ՀՈՆ ՔԻՉ ՄԸ ՀԱՆԳՉԻՆՔ» (ՄԲ. 6:31)

Ամառնային այս օրերուն, երբ դպրոցները իրենց դռները կը փակեն, արձակուրդները կը սկսին, եւ շատեր կը մտածեն քիչ մը հեռանալ առօրեայի զբաղումներէն, Տիրոջ այս խօսքը անգամ մը եւս կը հնչէ մեր ականջներուն. «Եկէ՛ք երթանք ամայի տեղ մը, որ առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը հանգչինք» (ՄԲ 6:31):

Այսօր բոլորս կը վազենք: Կը վազենք հասնելու տեղ մը, հասնելու այն նպատակներուն, որոնք մեր առջեւ դրած ենք: Կը ջանանք իրականացնել մեր երազները, յաջողութեամբ պասկել մեր աշխատանքը, ապահովել մեր ընտանիքները, կատարել մեր պարտաւորութիւնները: Մեր օրերը լեցուած են հանդիպումներով, հեռաձայններով, նամակներով, ժամկէտներով եւ անվերջ պահանջներով:

Դժբախտաբար այս վազվզուկին, այս հեքին եւ տաղտուկին մէջ, յաճախ կը մոռնանք ամէնէն կարեւորը՝ մենք զմեզ, մեր անձերը:

Ուրիշներուն համար յաճախ ժամանակ կը տրամադրենք, բայց դժուարութեամբ ժամանակ կը յատկացնենք մենք մեզի համար: Երբեմն այնքան կը սպառենք մեր ուժը, որ ներքին յոգնածութիւն մը կը զգանք, որ ո՛չ քունով, ո՛չ ալ արձակուրդով ամբողջովին կը բուժուի:

Ահա թէ ինչու հանգիստը շռայլութիւն չէ, այլ՝ անհրաժեշտութիւն: Մարդը ստեղծուած չէ անընդհատ աշխատելու, տոնելու, վազվզելու համար: Ինչպէս հողը ժամանակ առ ժամանակ կը կարօտի հանգիստի, որպէսզի նոր պտուղ տայ, նոյնպէս ալ մարդը կարիքը ունի կանգ առնելու, շունչ քաշելու եւ վերագտնելու իր ներքին խաղաղութիւնը:

Մեր մարմինը Աստուծոյ պարգեւն է եւ պէտք է լաւ հոգ տանինք անոր: Երբ Յիսուս Քրիստոս եւ իր աշակերտները յոգնած վերադարձան իրենց առաքելութենէն, անոնց չըսաւ՝ «աւելի աշխատեցէ՛ք», այլ՝ «Եկէ՛ք... քիչ մը հանգչինք»: Ան գիտէր, որ ծառայելու համար նախ պէտք է վերանորոգուիլ: Ուրիշներուն լոյս տալու համար նախ պէտք է մեր սեփական ճրագը առկայծ պահենք:

Գուցէ այս ամառ մեզմէ իւրաքանչիւրս կարիքը ունինք մեր «ամայի տեղ»-ը գտնելու: Պայման չէ, որ հեռաւոր վայր մը ըլլայ: Երբեմն ամայի տեղը մեր տան խաղաղ անկիւնն է, եկեղեցոյ լոյսիւնը, բնութեան մէջ կարճ զբօսանք մը, կամ անկեղծ աղօթքի պահ մը Աստուծոյ հետ:

Կեանքի իսկական յաջողութիւնը միայն աւելի հեռուն հասնիլը չէ, այլ գիտակցութիւնը ունենալ, թէ երբ պէտք է կանգ առնել եւ վերանորոգուած շարունակել ճանապարհը:

«ԵԿԷՔ ԵՐԹԱՆՔ ԱՄԱՅԻ ՏԵՂ ՄԸ, ՈՐ ԱՌԱՆՁԻՆ ԿՐՆԱՆՔ ԸԼԼԱԼ ԵՒ ՀՈՆ ՔԻՉ ՄԸ ՀԱՆԳՉԻՆՔ» (ՄԲ 6:31):

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է: Այսպիսով դո՛ւք ալ, որպէս կենդանի քարեր, Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք՝ իբրեւ հոգեւոր տաճար. իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ»:

“As you come to him, the living Stone—rejected by humans but chosen by God and precious to him—you also, like living stones, are being built into a spiritual house to be a holy priesthood, offering spiritual sacrifices acceptable to God through Jesus Christ.”

Ա. Պետրոս 2.4-5

1 Peter 2:4-5





ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԻՆՉ Է ԵԿԵՂԵՑԻՆ:

Եկեղեցի կ'ըսուի ճշմարիտ աստուածայաշտության համար իրարու քով հաւաքուած հաւատացեալներու ամբողջութեան, որոնց գլուխը Քրիստոսն է:

ԵԿԵՂԵՑԻ ԲԱՌԸ ՈՐ ԼԵՁՈՒԻՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԵՒ ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ:

Եկեղեցի բառը յունարէն է եւ կը նշանակէ հաւատացեալներու ժողով:

ՔԱՆԻ ՄԱՍԻ ԿԸ ԲԱԺՆՈՒԻ ԵԿԵՂԵՑԻՆ:

Եկեղեցին երկուքի կը բաժնուի՝ Յաղթական Եկեղեցի, Ձինուորագրեալ Եկեղեցի:

ՈՐՆ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ:

Յաղթական Եկեղեցի կ'ըսուի հրեշտակներու եւ ննջող հաւատացեալներուն:

ՈՐՆ Է ՁԻՆՈՒՐԱԳՐԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՆ:

Ամէն ճշմարիտ քրիստոնեայ, Քրիստոսի զինուորեալ եկեղեցիին մաս կը կազմէ:

ԻՆՉՈՒ ԶԻՆՈՒՐԵԱԼ Կ'ԸՍՈՒԻ:

Որովհետեւ քրիստոնեաները հոգեւոր զէնքով զինուած են՝ մեղքի եւ սատանային դէմ կռուելու համար:

ՈՒՐԵՄՆ, ԻՆՉ ԵՆ ԱՅՆ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԸ, ՈՒՐ Կ'ԵՐԹԱՆՔ ԱՂՕԹԵԼՈՒ:

Մեր աղօթատեղիները նիւթական տաճարներ են, բայց եկեղեցի կը կոչուին, որովհետեւ զինուորագրեալ եկեղեցւոյ անդամները, այսինքն՝ քրիստոնեաները հոն կը հաւաքուին՝ զԱստուած պաշտելու եւ փառաբանելու համար:

ՈՐՈՂՔ ԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ:

Քրիստոնեայ կ'ըսուի անոնց, որ Քրիստոսի կը հաւատան, մկրտուած են Ամենասուրբ Երրորդութեան անունով եւ Յիսուս պատուէրները կը պահեն:

ՈՒՐԵՄՆ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՂՔ ՈՐՈՂՔ, ՉԵՆ ՄԿՐՏՈՒԱԾ:

Անոնք որոնք չեն մկրտուած, քրիստոնեայ չեն. եւ հաղորդակցութիւն չունին Քրիստոսի հետ:

ԻՆՉ ԸՍԱԾ Է ՔՐԻՍՏՈՍ ԱՅՍ ՄԱՍԻՆ:

Քրիստոս վճռապէս ըսած է. «Եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել» (Յհ 3.5):

THE KINGDOM OF GOD

Monday, 6 April 2020

A Christian lives in expectancy of the coming of God's Kingdom promised by Christ. Every time that we say the Lord's Prayer, we beseech God that His "Kingdom come..."

The Kingdom of God or Kingdom of Heaven, which was the central theme of Christ's miracles, parables, and teachings, is at the heart of the Church's being and mission. The Kingdom of God does not denote a geographical area, but a spiritual realm with God as its sovereign lord. With the incarnation of Christ, the Kingdom of God was inaugurated on this earth. Through His salvatory mission, Christ exposed the values, principles, and imperatives of the Kingdom. He referred to the signs of its imminence and, at the same time, alluded to its consummation in Parousia (Greek word meaning presence or arrival) at the end of the world (Mk 1:15; 9:1).

The Kingdom of God is God's decisive intervention in history. My professor at Fordham University, Piet Schonenberg S.J., a Dutch theologian expert in Christology, taught me a valuable lesson about the Kingdom of God; during a discussion, he said: "The Kingdom of God came with Jesus Christ; period." When I asked, with an attempt at humour, if it went back with Christ, he answered sharply that Christ gave it as a mission to the disciples and therefore the building of the Kingdom of God is the cardinal task of the Church.

In Christ, God's Kingdom is both a present and a future reality, an event and a process. We must neither consider the Kingdom of God otherworldly nor one to be realized in the future. The dynamic correlation and creative tension between these opposing dimensions upholds the church's life and orients its witness. As I grew in my ministry, I came to realize that the building of God's Kingdom was not one of the functions of the church but its raison d'être and that the church has no mission; it is a mission by its very being.

The church is the anticipation and the ferment of God's Kingdom on earth, a pilgrim community of faith on the way to the Kingdom of God. However, God's Kingdom transcends the boundaries of the institutional church and embraces the whole humanity and creation. The Kingdom of God, the church, and the world are different ontologically; they will converge in the eschatological realization of the Kingdom of God.

The Church is called to challenge the forces of the Kingdom of man and transform the world in the perspective of the Kingdom of God. The church should not remain indifferent to such pivotal issues of society as injustice, racism, violent extremism, and ecological disasters, issues that hamper the growth of God's Kingdom.

In the midst of anxiety and uncertainty caused by the pandemic and the growing commotion of the world, let us hear the announcement of Jesus Christ: "The time has come. The Kingdom of God is near. Repent and believe the good news" (Mk 1:15).

TURNING TO GOD
ARAM I

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...

Մոլորածները դարձի բերող, դարձնող զիս իմ չար սովորութիւններէս դէպի բարի սովորութիւն եւ դորձմէ՛ հոգիիս մէջ մահուան սուկալի օրը եւ գեհե՛նի երկիւղը եւ արքայութեան սերը, որպէսզի զոջամ մեղքերս եւ արդարութիւն գործեմ. եւ ողորմէ՛ քու արարածներդ եւ ինձի՛ բազմամեղիս:

ԱՄԷՆ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱԷԻՐԸԻՐԵՆ ԳԱԼՈՒ

«Ինձի եկէք դուք բոլորդ» (Մտ 11.28): Այս բառերով, Քրիստոս կը բացայայտէ իր սրտի փափաքը, իր բարի կամքը: Իր փափաքն ու կամքն է որ բոլոր մարդիկը իրեն գան, իրեն դիմեն: «Ինձի եկէք» բառերով, Քրիստոս ըսել կ'ուզէ՝

ա) «Ինձի յանձնուեցէք»: Քրիստոս կ'ուզէ որ իրեն յանձնուինք, եւ իրեն յանձնենք մեր սիրտն ու սրտի ապրումները, մեր հոգին ու հոգիի վերքերը, մեր միտքն ու մտքի մտահոգութիւնները, մեր կեանքը ու կեանքի բոլոր երեսները, մեր ներկան ու ներկայի վիշտերը, մեր ապագան ու ապագայի երազները, մեր ժամանակը, գործերը, աշխատանքները, եւ ամէն ինչ:

բ) «Ինձի բացուեցէք»: Յիսուս կ'ուզէ որ մեր սիրտը իր առջեւ բանան, պարզենք, մերկացնենք: Ան կ'ուզէ որ խօսինք իրեն՝ մեզ մտահոգող երեսյներուն մասին, մեզ տագնապեցնող հարցերուն մասին, մեր միտքը չարչրկող խնդիրներուն մասին: Պարզենք մեր խռովութիւնները խաղաղութեան Իշխանին առջեւ. ան կարող է խաղաղեցնել խռոված ծովը մեր կեանքին: Յանձնենք մեր հոգերը մեծ Հոգատարին. ան կարող է հոգ տանիլ մեզի ամէն առէն: Բանանք մեր սիրտը սիրտերու Բժիշկին առջեւ. ան կարող է բուժել մեր սրտի խոցերը: Վստահինք մեր խնդիրները միակ Վստահելին. ան կարող է լուծել զանոնք: Ամուր բռնենք ձեռքէն Անոր՝ որուն ձեռքով ստեղծուեցանք. իր ձեռքին գործն ենք. ուստի լաւապէս կը ճանչնայ մեզ, մեծապէս կը սիրէ մեզ, եւ անսահմանօրէն կը գթայ:

գ) «Ինձի միացէք»: Քրիստոս կ'ուզէ որ իրեն միանանք եւ իրեն հետ միասին դառնանք մէկ ամբողջութիւն, կազմենք մէկ միութիւն: Զուր տեղ չէ որ Յիսուս ինքզինք կոչեց որթատունկ, իսկ մեզ՝ ճիւղ: Ինչպէս ճիւղը առանց որթատունկին կը չորնայ, նոյնպէս ալ մենք, առանց Յիսուսի կը չորնանք ու կը մեռնինք հոգեպէս: Յիսուս ինքն է սնունդը մեր հոգիին, ինքն է աւիշը մեր սրտին. առանց իրեն մենք չունինք կեանք:

դ) Յիսուսի «Ինձի եկէք» խօսքը՝ իր անձին հետ անձնական յարաբերութեան մէջ մտնելու հրաւեր մըն է նաեւ: Ըսած ենք ու կը կրկնենք. Յիսուս իր արիւնը չթափեց լոկ մեր մեղքերը ներելու համար, այլ նաեւ ու մանաւանդ, մեզ Աստուծոյ զաւակները դարձնելու, եւ զԱստուած՝ մեր հարը, եւ իր զխաւորութեամբ Աստուծոյ հետ մէկ ընտանիք կազմելու:

«Ինձի եկէք»: Ընդառաջենք Տիրոջ հրաւերին եւ գանք իրեն: Առանց իրեն ո՛չ կեանք ունինք եւ ո՛չ ալ կեանքի յոյս, որովհետեւ ինքն է կեանքը (Յհ 14.6): Առանց իրեն մենք կորսուած ենք, որովհետեւ ինքն է մեր Փրկիչը (Ղկ 9.55): Եւ տակաւին, ինքն է մեր յաղթութիւնը Չարին դէմ. առանց իրեն մենք պարտուած ենք Չարին կողմէ: Ինքն է ճամբան (Յհ 14.6). առանց իրեն մենք կը դանդաջենք մեղքի խաւարին մէջ: Ինքն է աշխարհի լոյսը (Յհ 8.12). առանց իրեն մենք մութի մէջ ենք: Ինքն է յարութիւնը (Յհ 11.25). առանց իրեն մեռելութիւն է մեր կեանքը: Ինքն է ճշմարտութիւնը (Յհ 14.6). առանց իրեն ստութիւն է. մեր կեանքը: Ինքն է իրաւ հովիւր (Յհ 10.11). առանց իրենք մենք մոլորած ենք: Ինքն է դուռը (Յհ 10.7). առանց իրեն մենք դուրս կը մնանք արքայութենէն:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
Վաղի՛նակ Ծ. Վրդ. Մելոյեան





ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ

ՔՈՒՆ ՊԱՏԱՐԱԳ ԿԱՐ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

ՀԱՅՐ ԵՐԿՆԱԻՈՐ, ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՑ

Մինչ պատարագիչը իր աղօթքը կը շարունակէ անլսելի ձայնով, դպրիներ ու ժողովուրդ կը սկսին երգել «Հայր Երկնաւոր» երգը:

Անցեալին, դեռ մինչեւ 13րդ դարու սկիզբը, անիկա չկար: Հաւանաբար մինչ այդ, պատարագիչը բարձրաձայն կը շարունակէր իր աղօթքը, իսկ ժողովուրդը լուռ մտիկ պէտք էր ընէր: Այս երգը, ինչպէս նաեւ յաջորդ «Որդի Աստուծոյ» եւ «Հոգի Աստուծոյ» երգերը, 13-15րդ դարերու յանդիման են, որովհետեւ 15րդ դարէն սկսեալ կը յայտնուին Պատարագամատոյցներուն մէջ: Որքան ալ մենք այսօր դժուար կը պատկերացնենք մեր Պատարագը առանց այս երգերուն, որոշ է, որ շուրջ 10 դար առանց անոնց Պատարագը կատարելու ենք:

Ինչպէս անոնց յանդիման ճշգրիտ ժամանակը, այնպէս ալ դժբախտաբար անոնց հեղինակները կամ հեղինակը (ինչ որ անիկա հաւանական է) մեզի անծանօթ կը մնան:

Երեք երգերը ձեռով մը մէկ ամբողջութիւն կը կազմեն (թէպէտ ընդմիջումով), որովհետեւ առանձին-առանձին ամենատարբեր երգեր անձերուն ուղղուելով հանդերձ՝ Քրիստոսի փրկագործական գոհագործման մէջ Հօրը կամքը եւ նպատակը, Որդիին ինքնանուէր ընծայումը, եւ Սուրբ Հոգիին կամակցութիւնը կը յայտնեն:

Պատարագի այս խորհուրդին ընդմէջէն, միաժամանակ կը լսենք աղաչանքը, որ.-

ա) Հայրը ողորմի իր բանաւոր հօտին, ինչպէս իր կամքն է արդէն:

բ) Որդին իր Հօրը հետ հաշտեցնէ մեզ՝ իր սուրբ Արիւնով փրկուած հօտը:

գ) Սուրբ Հոգին գայ եւ իր լուսին հասցնէ իրեն փառակից Որդիին պատարագումին խորհուրդը:

Պատարագիչը, ինչպէս ըսինք, մինչ այդ կը շարունակէ իր եկար եւ միակտոր աղօթքը, յիշելով՝ այս խորհուրդը տեւականօրէն կրկնելու Քրիստոսի հրահանգը, որուն իբրեւ գործադրութիւն՝ ահա մենք «կը յիշատակենք մեզի համար անոր փրկագործ չարչարանքները, կենսատու խաչելութիւնը, երեքօրեայ թաղումը, երանելի յարութիւնը, աստուածապէս համբարձումը, Հօրը աջ կողմը նստիլը, եւ անոր ահաւոր ու փառաւոր երկրորդ գալուստը»:

ՑԱՄԵՆԱՑՆԻ

Այս աղօթքին անմիջական պատասխանն է «Յամենայնի օրինեալ ես, Տէր» կարճ երգը, որ Աստուծոյ ուղղուած գեղեցիկ փառաբանութիւն մըն, պարզ բայց իմաստով պերճ, եւ եղանակով (իր քանի մը տարբերակներն ալ) յաղթական ու տօնական:

Զմոռնաք, ինչպէս ըսինք ու կը կրկնենք, որ ամբողջ Պատարագը գոհաբանութիւն է, եւ հետեւաբար եղանակները բնաւ պէտք չէ կամայականօրէն դանդաղ ու քաջշունք դառնան, այլ՝ ըլլան զգաստ ու պիրկ, հոգեկրթիչ ու ոգեւորիչ: Այլ խօսքով՝ խօսքերուն անմիջականութիւնը եւ իմաստէն բոխող ներքին լարումը պէտք է նաեւ երգերուն մէջ դրսեւորուի:

Երգին հետ պատարագիչը ինք եւ ժողովուրդին գոհաբանութիւնը կը կրկնէ, մանաւանդ անոր համար, որ Աստուած մեր անարժանութիւնը անտեսելով՝ «մեզ այսպիսի ահաւոր եւ անպատեմելի խորհուրդի մը սպասաւոր կարգեց», ո՛ր թէ մեր արժանիքներուն նայելով, որ չունինք, այլ՝ իր բազմազեղ, ամենառատ ողորմութեամբը:

Ս. ՀՈԳԻՆ ԿՈՉՈՒՄԸ

Ապա, մինչ դպրիներ ու ժողովուրդ «Որդի Աստուծոյ» կ'երգեն, պատարագիչը կ'երկրպագէ Սուրբ Սեղանին, եւ կ'աղօթէ՝ որ Սուրբ Հոգին գայ եւ իրմով օրհնէ Սեղան դրուած Հացն ու Բաժակը, այնպէս որ անոնք ստուգապէս փոխարկուին մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Մարմինն եւ Արեան: Ապա, Ս. Հոգիին ոգեկոչումով նախ առանձին-առանձին կ'օրհնէ հացն ու գինին, յետոյ երկուքը միասին:

Պատարագիչի իւրաքանչիւր օրհնութեան հետ Սարկաւազը կը խնկարկէ, իսկ ասարտին՝ խորանին վրայ գտնուող բոլոր սպասարկողները երկիւղածութեամբ կ'երկրպագեն սուրբ Սեղանին եւ նուիրագործուած Ընծաներուն:

Վերը բացատրեցինք արդէն, որ մինչ Լատին Եկեղեցին «Առէք Կերեք»-ին մէջ կը տեսնէ Ընծաներուն փոխարկման պահը, մեր եւ Արեւելեան բոլոր եկեղեցիներու աստուածաբանական հասկացողութեամբ՝ հացին ու գինիին փոխարկումը, այսինքն՝ Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արիւնը դառնալը այս պահուն է, որ իրենց լրումը՝ «կատարումը», կը գտնեն Ս. Հոգիով, որ կը սրբագործէ Ընծաները եւ կը կատարէ փոխարկումը:

Անոր այս փոխարկումէն ետք՝ այլեւս անոնք Տիրոջ Մարմինն ու Արիւնն են, եւ հաւատքով ճաշակողներուն համար գրաւական են Աստուծոյ դատաստանէն ազատութեան եւ մեղքերու քաւութեան ու թողութեան, ինչպէս բարձրաձայն կը դառնան պատարագիչը («Որպէսզի եղիցի սա...»):

Մեր Եկեղեցոյ այս համոզումը պարզորոշ կերպով կը տեսնենք նաեւ յաջորդ աղօթքը կանխող ծանօթութեան մէջ, ուր կ'ըսուի. «Քահանան ասկէ ետք չի խաչակնքներ խորհուրդին վրայ: Ձեռքերը միշտ սկիհէն անելի ցած կը տարածէ, իսկ աչքերը սուրբ Խորհուրդին յառած կը պահէ»:

ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՑ

Այս հանգրուանին, դպրիներն ու ժողովուրդը «Հոգի Աստուծոյ» կ'երգեն: Ի տարբերութիւն «Հայր Երկնաւոր» եւ «Որդի Աստուծոյ» երգերուն, որոնք միայն կենդանի հաւատացեալներուն համար աղաչանքներ կ'ընեն, «Հոգի Աստուծոյ» երգը կ'աւարտի՝ աղաչելով, որ Ս. Հոգին «հանգիստ պարգեւէ մեր ննջեցեալներու հոգիներուն»:

Պէտք է գիտնալ, որ Ս. Պատարագը կը մատուցուի «վասն կենդանեաց եւ ննջեցեցոց»: Ահա, ողջերուն համար անդադար եւ բազմաթիւ աղաչանքներ մատուցանելէ ետք, այժմ այն հանգրուանն է, երբ յատուկ աղօթքներով կը յիշատակենք նաեւ ննջեցեալները: Եւ ասիկա այն պարզ պատճառով, որ եկեղեցին Քրիստոսի Մարմինն է: Իսկ Քրիստոսի Մարմին ըսելով նկատի ունինք ո՛չ միայն ողջերը՝ Զինուորեալ Եկեղեցին, այլ նաեւ ննջեցեալները՝ Յաղթական Եկեղեցին:

Ուրեմն՝ մեր հաւատքին մէջ Եկեղեցին միութիւնն է այս երկուքին, որոնք անբաժանելի են, միացած՝ նոյն Տիրոջ, նոյն Հաւատքին եւ նոյն Յոյսին մէջ, նոյն սիրոյն եւ փոխադարձ աղօթքին մէջ:

Մենք միշտ կը յիշատակենք զանոնք ու կ'աղօթենք անոնց համար, ինչպէս անոնք մեզ կը յիշատակեն եւ կ'աղօթեն մեզի համար: Ասիկա առաքելաբան եւ անխախտելի համոզումն է Եկեղեցիին, որ այս փոխադարձ յիշատակումին եւ աղօթքին մէջ կը տեսնէ Քրիստոսական սիրոյ պատուէրին կատարումը եւ լրումը:

Արդ, ննջեցեալներու յիշատակութիւնը կը կատարէ նաեւ պատարագիչը, որ մասնաւորելով ու խմբաւորելով կը թուէ «Քրիստոսի հաւատքով ննջած բոլոր նախահայրերը, հայրապետները, մարգարէները, առաքեալները, վկաները կամ մարտիրոսները, եպիսկոպոսները, երէցները, սարկաւագները, եկեղեցոյ բոլոր սպասարկուները, եւ հաւատքով վախճանած բոլոր հաւատացեալները, այր թէ կին»:

Ի դէպ, յիշենք նաեւ, որ կարգ մը ձեռագիր Պատարագամատոյցներու մէջ «Հոգի Աստուծոյ» երգը «Գոհութիւն եւ Փառաբանութիւն» եղանակաւոր քարոզէն ետք կու գայ («եւ եղիցի ողորմութիւն...» էն առաջ), նկատի առնելով որ ննջեցեալներու սկսած յիշատակութիւնը այնտեղ կ'աւարտի:

(Շարունակելի 12)

«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՑ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԱՍԻՆ

Աւետարանը այն գիրքն է, որմէ անելի բարձր մտատրական արտադրութիւն մը ի լոյս չէ եկած աշխարհի մէջ:
ՄԱՐԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

Աստուածաշունչը կը մերկացնէ ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը՝ կը մերկացնէ մարդը:
ՕԳՈՍԻՆՈՍ ԵՐԱՆԵԼԻ

Աստուծոյ զօրութիւնը Սուրբ Գիրքի գիտութեամբ եւ վարդապետութեամբ կը ճանչցուի եւ ո՛չ ոք կրնայ զԱստուած ճանչնալ եւ պաշտել, ինչպէս որ պէտք է, առանց Սուրբ Գրոց գիտութեան:
Ս. ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Մենք պէտք է միշտ Աւետարանի խրատով դաստիարակուինք՝ լուսաւորելու համար, որպէսզի ձեռք ձգենք Կոտորածներուն մէջ ամփոփուած ճշմարտութեան Սուրբ Հոգիի շնորհքներէն: Ուստի դարձիւնք դատարկ ու վայրապար քննութեան եւ ընթանանք Սուրբ Գիրքի՝ Հին ու Նոր Կտակարաններուն խրատներով: Սուրբ Գիրքերը մեր վարդապետներն են: Անոնց միջոցով ընդունինք յաւիտենական յոյսը եւ անոնցմով բարձրանանք աշխարհէն վեր:
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ ԲԱՆ ՀԶ. (Բ. ԵՒ Գ.)

